ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՆԶՊ ԵՎ ԱԿ

Թեմա- <<Փոխներգործուն>> (ինտերակտիվ) մեթոդի կիրառումը ՆԶՊ դասապրոցեսում որպես դասավանդման արդյունավետ միջոց

Կազմեց - Հակոբ Հակոբյան

Ղեկավար - Վարդան Ստեփանյան

Կապանի N2 ավագ դպրոց ՊՈԱԿ

ԿԱՊԱՆ 2022

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ....3
Գրականության ակնարկ 6
Գործնական համատեքստ 8
Դաս 1 10
Դաս 2 16
Եզրակացություն....23
Օգտագործված գրականություն....24
Հավելված 25

ՆԱԽԱԲԱՆ

Ուսուցման մեթոդը (հունարեն՝ ճանապարհ՝ ինչ-որ տեղ, ինչ-որ բանի տանող) մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին։

Ուսուցման գործընթացի կազմակերպումը ներառում է բազմազան մեթոդներ։ Դրանց մի մասը հաջողությամբ բռնել է ժամանակի քննությունը, ավանդաբար կիրառվել ու կիրառվելու է։ Սակայն հասարակության զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված նոր խնդիրները և հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդներ։

Ուսուցման մեթոդը, իհարկե, քարացած հասկացություն չէ, դոգմա չէ։ Այն ունի ավելի լայն ընդգրկում։ Զինղեկը, բացի ընդհանուր, պարտադիր ձևերից, պետք է կարողանա գտնել իր աշակերտներին համապատասխան մոտեցում։ Սովորողների կազմը լինելով խիստ բազմազան, ունենալով ընկալունակության տարբեր մակարդակ, անհատակն առանձնահատկություններ, յուրովի խառնվածք ու բնավորության գծեր՝ զինղեկից պահանջում է տարբերակված մոտեցում։ Հենց այդ տարբերակված մոտեցումն էլ իր կնիքն է դնում ուսուցման մեթոդի բազմազանության վրա։

ՆԶՊ առարկան ընդգրկում է մի շարք ինքնուրույն, իրարից անկախ բաժիններ՝ ռազմահայրենասիրական դաստիարակություն, օրենսդրական հարցեր, համազորային կանոնադրություններ, մարտավարության հիմունքներ, կրակային ու շարային պատրաստություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր, առաջին բուժօգնության հիմունքներ։ Պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր բաժին ունի իր դասավանդման առանձնահատկությունները, պարապմունքների բազմազնությունը՝ տեսական ու գործնական, անհատական ու խմբային, դասարանական ու դաշտային։ Պարապմունքների ձևի ընտրությունը կախված է նաև առկա ուսումնական բազայից, դպրոցի տեղակայման վայրից՝ քաղաքում թե գյուղական շրջանում, շեֆ զորամասի

տեղակայման հնարավորությունից, օրվա և տարվա եղանակից: Հետևապես պետք է պատրաստ լինել, ելնելով իրավիճակից, օրվա եղանակից, ուսումնական բազայի հնարավորությունից, ընտրել պարապմունքների անցկացման ամենաարդյունավետ ձևը:

Հետազոտական աշխատանքը իրականացրել եմ փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդի կիրառմամբ, որն առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով:Դրա էությունն այն է, որ բոլոր սովորողները ընդգրկվում են ուսումնառության գործընթացի մեջ և յուրաքանչյուրը իր ներդրումն է անում: Փոխօգնության մթնոլորտում տեղի է ունենում գիտելիքների, մտքերի փոխարկում, որը նպաստում է նոր գիտելիքների ձեռք բերմանը, զարգացնում է իմացական դաշտը: Դասերի ընթացքում կազմակերպել եմ անհատական, զույգերով աշխատանքներ: Դասերը կառուցված են համագործակցային ուսուցման եղանակով, որն ապահովում է բոլորի մասնակցությունը՝ առաջադրված խնդիրներին արդյունավետ լուծումներ որոնելու ուղղությամբ: Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է , երբ խնբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված է ուսուցման գործընթացում և հաղորդակցվելու միջոցով բոլորն օգնում են միմյանց՝ ըմբռնելու նյութը:

Փոխներգործուն մեթոդը թույլ է տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ ուսուցչին փոխազդել միմյանց վրա: Այս մեթոդը առավել համապատասխանում է անձի անհատականության բացահայտմանը ուղղված մոտեցումներին, քանի որ վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում), ընդ որում և՛ աշակերտները, և՛ ուսուցիչը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ: Ուսուցիչը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպչի, խմբի ղեկավարի, աշակերտների համար անհրաժեշտ պայմանների ստեղծողի դերում: Բացի դրանից փոխներգործուն մեթոդի հիմքում ընկած է մասնակիցներից յուրաքանչյուրի փորձի միջոցով ուղղակի ազդեցությունը միմյանց վրա, քանի որ փոխներգործուն

մեթոդներից շատերը իրականացվում են հենց մասնակցի փորձի շնորհիվ, ընդ որում ոչ միայն կրթական։ Նոր գիտելիքը և կարողությունը փնավորվում են հենց այդպիսի փորձի հիման վրա։

Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել եմ բացատրական-զննական, ուսուցողական - ճանաչողական գործունեության կազմակերպման եղանակները, իսկ դասապրոցեսը կառուցել և կիրառել եմ բանավոր, զրույցի, դիտարկման եղանակները։

Գրականության ակնարկ

Արդյունավետ ուսումնառությանը նպաստող տեխնիկաների մշակման և զարգացման գործընթացներին վերաբերվող հետազոտություններում կարևորվում են սովորողների ճանաչողության՝ իմանալու, հասկանալու, խնդիրներ լուծելու անհատական բնույթը դրանով էլ պայմանավորված աշակերտների ուսումնառության եղանակների վերաբերյալ գաղափարները: Հատկապես հետաքրքրության է ներկայացնում սոցիալ կառուցողական տեսության կողմնակիցների մոտեցումը այն աշխատանքում հետազոտվող խնդրին, կարևորելով հաղորդակցման ազդեցությանը յուրաքանչյուր անհատի մտածողության զարգացման վրա, խրախուսվում է ուսումնառական համայնքի ստեղծման, զույգերով և խմբերով աշխատանքների կազմակերպման գաղափարը (Capel, Leask, Younie, 2016թ): Մանկավարժության մեջ մեծ ճանաչում ձեռք բերած համագործակցային ուսուցման մեթոդները սովորողների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելը դիտարկվում են որպես ուսումնառության արդյունավետությունը խթանելու միջոց՝ ապահովելով դրական փոխկապակցվածության, անհատական հաշվետվության և պատասխանատվության, միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի սոցիալական հմտություններ (Զոհրաբյան և այլոք, 2002թ): Ժամանակակից հոգեբանության և մանկավրժության ոլորտի տեսական և գործնական հետազոտությունների արդյունքում ձևավորվել է <<Ուսումնառության գործընթացի ակտիվացման>> գաղափարը, որը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը նախատեսվում է ոչ թե ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, իսկ աշակերտի կողմից մտապահում և վերարտադրում, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում (Бобрышов, Смагина, 2010թ.): Ուղղված լինելով առաջնային գիտելիքի ձեռքբերման, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, ակտիվ մեթոդներով ուսումնառության գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է ողջ

ուսուցումը անցկացնել միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական որոշ մեթոդներ (պատմել, բացատրել, դասախոսություն):

Ակտիվ մեթոդները (համագործակցային ուսուցում, ուսուցողական խաղեր և այլն) պետք է կիրառեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը՝ ապահովելով կրթական խնդիրների լուծման ճանապարհները տարբեր տեսանկյուններից: Հատկանշական է այն, որ խմբային աշխատանքի արդյունքում սովորողների մոտ զարգանում են այնպիսի մտածողական հմտություններ, ինչպիսիք են գնահատումը, վերլուծումը, կառուցումը (Петти, 2010թ.): Սույն հետազոտության համատեքստում հատկապես կարևոր է որպես համագործակցային ուսուցման բաղադրիչ՝ փոխներգործուն առաջադրանքների պլանավորումը և կիրառումը այն առումով, որ դրանք պետք է նպաստեն սովորողների համագործակցությանը, նրանց ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին՝ ապահովելով ուսումնասիրվող նյութի ընկալման և մտածողական հմտությունների մակարդակի բարձրացում, ուսումնառության առաջընթացի գրանցում (Հովհաննիսյան և այլոք, 2006):

Ուսումնառության պրոցեսում առաջադրանքների բնույթի կարևորությունը շեշտադրվել է հոգեբանության «կոգնիտիվ» դպրոցի կազմից առաջ քաշվող ուսումնառության կառուցողական տեսության դրույթներում (Петти, 2010թ.): «Գործնական խորը գիտելիքներ ձևավորելու համար ուսուցիչները պետք է տրամադրեն մտածական բարձր՝ բլում է տաքսոնոմիայի սանդղակները»:

Ժամանակակից մանկավարժության մեթոդաբանական գրականության մեջ բերվում և ըստ կիրառման նպատակահարմարության մեկնաբանվում են համագործակցային ուսուցման կազմակերպման արդյունավետ մեթոդներ ու հնարներ (Մերենցի, Սաբո, Տակաչ, 2006թ.)

Անկախ մեթոդի ընտրությունից, բոլոր դեպքերում մասնակցությունն առավելագույնը հասցնելու նպատակով ակտիվ ուսումնառության ռազմավարությունները արդյունավետ կառավարման համար կարևորվում են

համագործակցային ուսուցման խմբերի տեսակները, ձևավորման սկզբունքները, չափերը, անդամների միջև ձևերի բախշումը, առաջադրանքի կառուցվածքը, խմբային աշխատանքը հաջողության ցուցիչները, ստուգումը, շտկումը, հետադարձ կապը (Петти, 2002թ):

Այսպիսով անդրադառնալով համագործակցային ուսուցման տեսական հիմքերին և գործնական կիրառության ոլորտներին և դիտարկելով մտածողությունը որպես իմացական գործընթաց, տրամաբանական է դիտարկել մտածողության զարգացման հնարավորությունը համագործակցային ուսուցման ենթատեքստում: Այս խնդրի շուրջ մեկնաբանությունները խաչվում են հոգեբանության և մանկավարժության բնագավառում կատարված տեսական և գործնական հետազոտությունների շրջանակներում:

Արևիկ Անափիսյան առաջ է քաշում հետևյալ հետազոտական հարցադրումը – արդյո՞ք դասավանդման մեթոդները ազդում են քննադատական մտածողության ձևավորման վրա և բերում է փորձնական հետազոտություններով հիմնավորված փաստեր առ այն, որ քննադատական մտածողության ձևավորման միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը (Ա. Անափիոսյան, 2012թ)

Ն. Դավոյանը անդրադառնում է սովորողների քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունների ձեռք բերման գործընթացին և փաստում է, որ բլումի տաքսոնոմիայի մակարդակների տարազատումն արդյունավետ է հատկապես առաջադրանքների և վարժությունների ընտրության և ստեղծման գործընթացում, քանի որ խնդիր է դրվում նպատակադրել ոչ միայն գիտելիքի ձեռք բերումը, այլև փոխել գիտելիքի ձեռք բերելու ընթացքում սովորողների վարքագիծ (Դավոյան, 2016թ)

Գործնական համատեքստ

Հետազոտությունը իրականացվել է «Գեղանուշի միջնակարգ դպրոց»-ի 10-րդ դասարանում, որտեղ սովորում են 5 աշակերտ՝ 3 աղջիկ և 2 տղա:

Որպես հետազոտության թեմա ընտրել եմ փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդը, ինչպես նաև համագործակցային ուսուցման կիրառումը ՆԶՊ դասապրոցեսում, որպես դասավանդման արդյունավետ միջոց։

Հետազոտական աշխատանքում ընդգրկված թեման վերցված է ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչի ՆԶՊ առարկայի 10-րդ դասարանի ուսումնական ծրագրից և համապատասխանում է մարտավարության հիմունքներ բաժնի 8-րդ թեմային- Ականներ և պատերազմից մնացած չպայթած զինամթերքի իրազեկում։ Դրանց հետ վարվելու կանոնները։ Ականապատված տարածքների նախազգուշացման նշանները- 2ժամ (Պարապմունք-1-Չպայթած զինամթերք և դրանց հետ վարվելու կանոնները-1ժամ, Պարապմունք-2-Չպայթած զինամթերքի իրազեկում։ Ականապատված տարածքների նախազգուշացման նշանները- 1ժամ)։

Ընտրված թեմայի դասավանդման նպատակն է որ աշակերտները.

1. Գիտենան և ճանաչեն ականները և չպայթած զինամթերքը և դրանց առկայության վիճակը իրենց տարածաշրջանում
2. Իմանան հավանական վտանգ պարունակող և անվտանգ տարածքները
3. Ճանաչեն և իմանան ականների և ականապատված տարածքների մասին նախազգուշացնող նշանները
4. Իմանան ականների և չպայթած զինամթերքի հավանական հետևանքները
5. Իմանան վարքի կանոնները անծանոթ տարածքներոփում

Որպես դասի վերջնարդյունք ակնկալել եմ, որ աշակերտները.

1. Կարողանան զանազանել ականների տարբեր տեսակները, որոնք հնարավոր է գտնվում են իրենց տարածքում, տեղյակ լինեն վտանգին
2. Ունենան վստահություն և կարողություն՝ իրենց սովորածը հաղորդելու ուրիշներին
3. Գիտենան թե ինչ անեն ական կամ չպայթած (կամ լքված պայթուցիկ զինամթերք) նկատելիս կամ, եթե ոտք են դրել վտանգավոր տարածք՝ ում տեղեկացնեն այդ մասին

4. Կարողանան փոխանցել ստացած գիտելիքները ընտանիքի անդամներին, ընկերներին և իրենց շրջապատին։

Դաս 1- Չպայթած զինամթերք և դրանց հետ վարվելու կանոնները-1 ժամ

Խթանման փուլ- Դասապրոցեսը սկսել են մտագրոհով։ Հայտարարեցի, որ աշակերտները արտահայտեն իրենց իմացած տեղեկությունները թեմայի վերաբերյալ։ Խրախուսեցի յուրաքանչյուր աշակերտի միտք, թեկուզ վախվորած և անվստահ։ Աշակերտները արտահայտեցին իրենց իմացածը և չանհանգստացան սխալվելուց։

Այնուհետև թեմայի կարևորության և արդիական լինելու վերաբերյալ բացատրեցի՝ որ Հայաստանում ականներով և չպայթած զինամթերքով աղտոտվածությունը հետևանք է Լեռնային (Արցախի) շուրջ հարևան Ադրբեջանի հետ հակամարտության։ Աղտոտվածությունը սահմանափակվում է Ադրբեջանին սահմանակից 5 տարածքներով՝ Արարատ, Գեղարքունիք, Սյունիք, Տավուշ, Վայոց Ձոր (322կմ^2 ընդհանուր մակերեսով)։ Հայաստանում ականներից կամ չպայթած զինամթերքից 2005թ. դրությամբ տուժել է ընդհանուր թվով 68737 անձ։ Այսօր ականները և չպայթած զինամթերքը կազմում են մեր իրականության մի մասը և մենք չենք կարող ապահով ապրել այդ իրականության մեջ՝ առանց մեզ հասարակությունը սովորեցնելու կողմնորոշվել նոր և անծանոթ իրավիճակներում գործել համապատասխան կերպով և իրենց պահել զգուշավորությամբ, փոխել իրենց վարքը՝ նվազեցնելու համար զոհվելու վիրավորվելու ռիսկը։ Չպայթած զինամթերքը դրանք ականներ չեն, դրանք պատերազմի պայթուցիկ մնացորդներ են (զենքերի հավաքածուներ, նռնակներ, ականանետեր, հրթիռներ, արկեր կամ գնդակներ և այլն), որոնք օգտագործվել են, սակայն չեն պայթել, ինչպես նախատեսված է՝ սովորաբար գետնի կամ այլ կարծր մակերեսի հետ շփումից։ Սա չէ նշանակում, թե չպայթած զինամթերքը կամ լքված պայթուցիկ զինամթերքն անվնաս են։ Իրականում դրանք չափազանց անկայուն են և կարող են պայթել ամենաթեթև հպումից։ Սովորաբար չպայթած զինամթերքը ավելի մեծ ավերվածություններ են պատճառում, քան ցամաքային ականները։ Բացատրելիս աշակերտներին ցույց տվեցի Սյունիքի մարզի

ականներով և չպայթած զինամթերքով աղտոտվածության քարտեզը և ականների, չպայթած զինամթերքի նկարները:

Իմաստի ընկալման փուլ- այս փուլում աշակերտների ստացած գիտելիքները գնահատելու, դրանց ընդհանրությունը ցույց տալու համար կազմեցի Վեննի դիագրամը գրատախտակի վրա և լրացրեցինք այն.



Կշռադատման փուլ- Այս փուլում աշակերտներին հանձնարարեցի դասի ընթացքում հնչած հիմնական հասկացողությունները գրի առնել տետրում և նախօրոք պատրաստված թեստերի օգնությամբ ամրապնդել ստացած գիտելիքները

1. Որտեղ են ականների և ՉԶ գտնվելու ամենամեծ հավանականությունը
   - լքված տներ
   - կամուրջներ
   - դպրոցներ
   - ճանապարհներ
2. Ինչպես կվարվեք, եթե հայտնվեք ականի հարևանությամբ
   - կշարունակեմ ճանապարհս
   - եկածս ոտնահետքերով հետ կգնամ
   - կանգ կառնեմ, կանշարժանամ և բարձրաձայն օգնություն կկանչեմ
   - կսպասեմ՝ մինչև մարդիկ կերևան
3. Եթե հանդիպել ենք չպայթած զինամթերքի, ապա

- կտանեմ բնակավայրս
- ձեռք չեմ տա
- կկանչեմ ընկերներիս
- կզանգահարեմ «Թեժ գիծ»

4. Ինչը ձեզ կհուշի, որ տարածքը ականապատված է

_____

_____

_____

_____

Դասապրոցեսի վերջում ամփոփեցի կատարված աշխատանքը, հայտարարեցի հաջորդ դասի թեման.



УМВП-62
12-01-73



03М-
Ⓢ-072

Դաս 2. Չպայթած զինամթերքի իրազեկում։ Ականապատված տարածքներից նախազգուշական նշաններ – 1 ժամ։

Դասը հիմնականում վարեց ուսուցչական, ճանաչողական, ցուցադրման երկխոսության եղանակով։ Դասի սկզբում աշակերտներին բացատրեցինք, որ աշխարհում հարյուր հազարավոր մարդ ամեն տարի զոհվում է ականների և պատերազմից մնացած, չպայթած զինամթերքի պայթյունից։ Զոհվածների մոտ 50% -ը կազմում են երեխաները, երեք անգամ անգամ ավելի մարդ դառնում են հաշմանդամ։

Նոր սերնդի ականների իրանը ոչ թե մետաղական է, այլ պլաստիկ, կերամիկայից, ապակուց, սինթետիկ հյուսվածքից, որոշ ականներ էլ չունեն պատյան, իսկ նրանցում կիրառվող պայթուցիչն ունի մեխանիկական մեծ ամրություն։ Ցանկացած ական որսիչով դրանք դժվար է հայտնաբերել։ Միայն ականառրսի ծառայության շների միջոցով է հնարավոր ականների հուսալի որոշումը։

Ականներից խուսափելու լավագույն միջոցը պատահարների կանխարգելումն է։ Գոյություն ունի պատահարների կանխարգելման 2 տարբերակ.

1. Ականազերծում- Բավականին ժամանակատար և ծախսատար գործընթաց է։ Եթե մեկ ականի արժեքը տատանվում՝ 30-300 ԱՄՆ դոլարի սահմաններում, ապա այն ականազերծելու համար կպահանջվի շատ ավելի մեծ գումար՝ մոտավորապես 300-1000 ԱՄՆ դոլար։ Եվ ավելի շատ ժամանակ էլ կպահանջվի ականազերծման աճխատանքներ կատարելու համար։ Ըստ մոտավոր հաշվարկների ամբողջ աշխարհը ականներից մաքրելու համար կպահանջվի ավելի քան 1000 տարի։

2. Պայթուցիկ զինամթերքի վտանգի իրազեկում – վտանգի կանխարգելման երկրորդ տարբերակը մարդկային և ֆինանսական ռեսուրսների մասով պակաս ծախսատար է և ժամանակի առումով ավելի արդյունավետ։

Պայթուցիկ զինամթերքի վտանգի իրազեկումը միջոցառումների մի խումբ է, որը նպատակ ունի վտանգված բնակչության շրջանում կանխարգելելու և նվազեցնելու պայթուցիկ զինամթերքով պայմանավորված հետագա պատահարներից մահվան և

խեղման դեպքերը՝ ականների, պատերազմի պայթուցիկ մնացորդների վտանգի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացման, ինչպես նաև առավել անվտանգ վարքագծի խթանման միջոցով: Այս միջոցառումների թվին են պատկանում

- Հանրային տեղեկատվության տարածումը ԶԼՄ–ների միջոցով (տեսահոլովակներ, մուլտֆիլմեր, պաստառներ, բուկլետներ, ռադիոհեռուստահաղորդումներ և այլն)
- Դասախոսությունները, դասընթացները, սեմինարները, տիկնիկային կամ այլ բեմադրությունները (փոքր տարիքի երեխաների համար)
- Համայնքների հետ անմիջական կապի ստեղծումը

Բացատրական մասից հետո դասարանը բաժանեցի 3 խմբի: Այդ խմբերին բաժանեցի 8-ական հավանական վտանգ պարունակող և անվտանգ տարածքների քարտեր: Հետո առաջարկեցի, որ խմբերում կարդան թերթիկներում գրվածքները և որոշեն, թե իրենց կարծիքով՝ դրանցից յուրաքանչյուրն այդ վերնագրից որին է վերաբերվում.

- Հավանական բարձր վտանգ պարունակող տարածքներ
- Անվտանգ տարածքներ
- Հավանական ցածր վտանգ պարունակող տարածքներ

Բարձր վտանգ ներկայացնել տարածքներ	Ցածր վտանգ ներկայացնող տարածքներ	Անվտանգ տարածքներ

Էլեկտրակայաններ	Բնակեցված քաղաքներ	Ճանապարհներ
Առողջության կենտրոններ	Հեռուստատեսային և ռադիոկայաններ	Արահետներ (կածաններ)
Նախկին ռազմական կայաններ	Մշակվող այգինե	Բնակեցված գյուղերի կենտրոններ
Խրամատներ	Դպրոցներ	Արոտավայրեր
Ավերված տներ	Օդանավակայաններ	Անտառներ
Երկաթուղիներ	Ծառերի տակ	Կամուրջներ
Ստվերախիտ վայրեր	Առուներ	Ջրանցքներ
Գետափեր	Պտղատու ծառերի տնկարաններ	Բարձունքներ

Աշխատանքը ավարտելուց հետո խմբերի ներկայացուցիչները հերթով կարդացին իրենց տարածքների անունները, տեղադրեցին ընտրված վերնագրի վրա, ապա պատճառաբանեցին իրենց խմբի ընտրությունը: Ես ընդհանրացրեցի վերջնական պատասխանները՝ ճշտումներ կատարելով:

Ականապատ տարածքների նախազգուշական նշանները:

Ականադաշտերը և ականապատված շրջանները մարդկանց տեսանելի, ճանաչելի դարձնելու և զգուշացնելի դարձնելու համար կիրառվում են միջազգային ընդունված նշաններ:

Նշանները պետք է լինեն

- Եռանկյան կամ քառակուսի ձևի, համապատասխան կողմերով 28,20 սմ եռանկյան և ոչ պակաս 15 սմ քառակուսու համար
- Գույնը՝ կարմիր կամ նարնջագույն, դեղին լուսարձակող եզրագծերով

- Պայմանական նշանը հեշտությամբ պետք է ճանաչվի
- Նշանի վրա պետք է լինի <<Ականներ>> բառը այն լեզվով, որը տարածված է այդ շրջանում, կամ Կոնվեցիայի վեց պաշտոնական լեզուներով (ալգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն)
- Նշանները պետք է դրվեն ականադաշտի կամ ականապատված շրջանի շուրջ այնպիսի հեռավորության վրա, որ մարդիկ մոտենալով այդ շրջանին՝ կարողանան այն տեսնել ցանկացած տեղից։

Բոլոր աշակերտները գիտակցեցին, որ չպետք է վերցնել կամ տեղափոխել ականների մասին նախազգուշացնող նշանները՝ դա կվտանգի ուրիշների կյանքը։

Դասի վերջում վերլուծելով աշակերտների թեմայից ստացած գիտելիքները, կարողությունները, գնահատելով թեստային աշխատանքի արդյունքները եկա այն եզրակացության, որ աշակերտները լավ են յուրացրել թեման, ըստ այդմ 5 աշակերտից 1-ը ստացավ <<9>>, 1-ը <<8>>, 2-ը <<7>> 1-ը <<4>> գնահատական։

ОСТОРОЖНО МИНЫ
ԶԳՈՒՇԱՅԵՔ
ԱԿԱՆԱՊԱՏՎԱԾ Է
DANGER MINES

DANGER MINES

ОСТОРОЖНО МИНЫ
DANGER MINES

ՍՅՈՒՆԻՔ

Սյունիքի մարզի կասկածյալ համայնքների ցուցակում ընդգրկված բոլոր 29 համայնքները, որոնցից ազդեցություն են կրում 18-ը՝ Խնածախ, Շուռնուխ, Հարթաշեն, Դավիթ Բեկ, Արևիս, Նոր Խնձորեսկ, Խնձորեսկ, Եղվարդ, Կորնիձոր, Արավուս, Կաղնուտ (Մողես), Ուժանիս, Ճակատեն, Սրաշեն, Շիկահող, Վերին Խոտանան, Նյուվադի, Ներքին Հանդ:

Գրանցվել են ականներով կամ չպայթած զինամթերքով աղտոտված 43 կասկածյալ տարածքներ:

Սյունիքի մարզում ականներից ազդեցություն է կրում ընդհանուր առմամբ 8207 հազար մարդ:

Կասկածյալ տարածքի միջին չափը 1,437,783.89 մ² է, գրանցվել է 72 սոցիալ-տնտեսական արգելափակում:

Սյունիքի մարզի ազդեցություն կրող համայնքներում ամենատարածված սոցիալ-տնտեսական արգելափակումը ճանապարհների (22 դեպք) և բերքատու հողերի (21 դեպք) արգելափակումներն են:

Առկա են նաև արոտավայրերի, անմշակ հողերի, ջրի, շենքերի և շինությունների, տների արգելափակումների դեպքեր:

Բոլոր համայնքներում եկամտի հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն է:



Եզրակացություն

Նորանկախ Հայաստանում կրթության բնագավառի բարեփոխումները և ուսուցչի դերը փոփոխությանը դարձան առաջնային։ Այսօրվա ուսուցիչը պետք է հանդես գան ոչ թե որպես նոր գաղափարների, մեթոդների, մոտեցումների ամրապնդող, այլ դրանք հիմնավորող, դատող մասնագետ։ Արդի ժամանակաշրջանում աշակերտների, ինչու չէ նաև ծնողների պահանջմունքները բավականին մեծ են, ուստի համագործակցային ուսուցմամբ հնարավոր է հետաքրքիր կազմակերպել ուսուցման գործընթացը։ Առավել շատ մեթոդների կիրառումը դասը կդարձնի բովանդակային և արդյունավետ։

Աշխատանքները կատարելիս մեծ պատասխանատվություն զգացի աշակերտների շրջանում, քանի որ թեման վերաբերվում է շրջապատի անվտանգությանը, մարդկանց կյանքի և առողջության պահպանմանը։ Քանի որ թեման վերաբերվում էր անվտանգ կենսագործունեությանը, աշակերտները պատասխանատվությամբ կատարեցին առաջադրանքները։

Օգտագործված գրականություն

1. ՆԶՊ 10-րդ դասարանի դասագիրք-2017թ. Վ.Օհանյան և այլոք

2. <<ՊՊՄ և ականների վտանգի իրազեկման ծրագիր ՀՀ>>-ում-2021թ. Հայկական կարմիր խաչի ընկերություն

3. <<Ապահովությունը մեր շրջապատում >>-2006թ. Յունիսեֆ Հայաստան, մշակող Ֆրիցա Երիցյան, Վաչագան Ասատրյան

4. ՆԶՊ ուսուցրի ձեռնարկ 10-11 դասարանների համար-2010թ, Վ. Օհանյան

Հավելված
Օրվա դասի պլան

Դասարան – 10

Դասի թեման – Մարտավարության հիմունքներ – թեմա 8/1 – Չպայթած զինամթերք և դրանց հետ վարվելու կանոնները

Դասի նպատակը

ա) ակադեմիական

1. Ճանաչի ականների տեսակները, պատերազմից մնացած չպայթած զինամթերքը

2. Դիմացինին լսելու, գնահատելու, ինքնագնահատելու կարողություն

Անհրաժեշտ պարագաներ-գիրք, տետր, գրատախտակ, կավիճ և այլն

Ցուցադրական նյութեր – ուսումնական ականներ, նկարներ, պաստառներ

Հիմնական հասկացություններ – ականներ, չպայթած զինամթերք, պատերազմից պայթուցիկ մնացորդներ, ականադաշտեր

Դասի ընթացքը.

Խթանման փուլ – ներառում է տնային առաջադրանք ստուգում, կկազմակերպվի մտքերի տարափ, կկազմվեն զույգեր

Իմաստի ընկալման փուլ – այս փուլում աշակերտների գիտելիքները գնահատելու, դրանց ընդհանրությունը ցույց տալու համար կկազմվի վեննի դիագրամը և կլրացվի

Կշռադատման փուլ – այս փուլում հիմնական հասկացությունները կգրվի

աշխատանքային տետրում, կիրականացվի թեստային

առաջադրանքի լուծում

Կհանձնարարվի տնային առաջադրանք – Չպայթած զինամթերքի իրազեկում։

Ականապատ տարածքների

նախազգուշացման նշանները։